



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 29 » \_\_\_\_\_ 06 \_\_\_\_\_ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 124

**Հունիսի 22-ից 28-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Հունիսի 22-23-ին՝ առանձին շրջաններում, 24-26-ին՝ տեղ-տեղ, 27-28-ին՝ շրջանների զգալի մասում, դիտվել է կարճատև անձրև և ամպրոպ, քանու ուժգնացում:

Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Սևանում՝ 43մմ, Սեմյոնովկայում և Ֆանտանում՝ 39մմ, Ճամբարակում, Հրազդանում, Ծաղկահովիտում՝ 34-36մմ, մնացած լեռնային շրջաններում մինչև 26մմ քանակությամբ, Ստեփանավանում՝ 32մմ, Ամասիայում՝ 26մմ, Դիլիջանում՝ 25մմ, Գորիսում՝ 17մմ, Արարատյան դաշտում՝ 8-13մմ, Երևանում՝ 4-6մմ քանակությամբ:

Հունիսի 22-ին, 25-27-ին՝ Երևանում, 26-27-ին Եղվարդում և Աշտարակում դիտվել է քամի՝ 5-10մ/վ. պորթկումների ժամանակ՝ 15-21մ/վարագությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հունիսի 22-26-ը բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով, 27-28-ին ցածր՝ 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հունիսի 24-ին: Շաբաթվա ընթացքում ամենաբարձր արժեքները գրանցվել են Սյունիքի հովիտներում  $+33...+37^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Կոտայքի նախալեռներում՝  $+32...+36^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $+28...+33^{\circ}\text{C}$ , Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝  $+24...+29^{\circ}\text{C}$ , Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝  $+23...+28^{\circ}\text{C}$  աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում  $+6...+11^{\circ}\text{C}$  (Մասրիկում  $+5^{\circ}\text{C}$ ), Լոռիում, Տավուշում, Կոտայքի և Սյունիքի նախալեռներում՝  $+9...+14^{\circ}\text{C}$  (Ստեփանավանում՝  $+8^{\circ}\text{C}$ ), Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝  $+16...+21^{\circ}\text{C}$  (Աշտարակում՝  $+15^{\circ}\text{C}$ ), Սյունիքի հովիտներում՝  $14...+19^{\circ}\text{C}$ :

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական  
ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել  
1900.84 մ (28.06.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ  
բարձր է 3սմ-ով:

Հարգանքով՝  
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

Գազիկ Սուրենյան  
012-31-79-29